նում է Սավացխա լ–րից․ նախ ուղղւում է դէպի արեւմուտք, ապա հարաւ–արեւմուտք, վերջը հիւսիս արեւմուտք մինչեւ Ճորոխի խառնուրդը: Դեվլիսի վտակն ընդունում է Բագինա[1], Ադխուլ, Դիվցխել, Ոտինգս, Կվինթաուր, Դեվսկել[2], Պետրուջա, Ոխուրչինա, Ցենատի, Վալոշան, Շվախիվ, Սամոխրեգս, Արավետ *առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ նրանց պարտէզները: Դեւխս վտակը աջից ընդունում է* Ադագուլի, Էբրիկա, Վանականի, Նագիարի *առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը:*

ԺԳ․

Իշկալա եւ Բէհլեվան վտակները:

Մուրղուլից ցած, դէպի հիւսիս Բորչըխա, Բերդ գիւղերի եւ Ցխուրետի առ–

---

[1] Բագինա առուակի եւ գեղի անունները յիշեցնում են Սպերի եւ Թորդումի Բագիններին նուիրած աւանների, ամրոցների եւ տաճարների անունները: Կասկած չկայ, որ Բագինան-Բագաուրի, Բագդատի, Բագաւանի, Բագրանի մի այլ դարձուածն է եւ ցոյց է տալիս, որ նա էլ անմիջական կրօնական կապ է ունեցել Ճորոխի Աւազանի միւս գաւառների հետ: Այս գաւառի ո՛չ միայն ագարակներն ու եայլաները նման են Ճորոխի Աւազանին միւս գաւառներին, այլ եւ աւերակներն էլ յիշեցնում են ընդհանրական կապ::

[2] Դեւսկել եւ Դիվցխել — տես նախընթաց ծանօթութիւնը: Ինչպէս Դեւխս, նոյնպէս Մաճխել եւ Աջարա անձամբ չեմ մտած եւ տեղեկութիւններս բոլորն էլ հիմնուած են Ռուսական Պաշտօնեաների ուսումնասիրութիւնների հիմունքով: